ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2016 թվականի N 868 - Ա

ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ «ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի, 67-րդ հոդվածի 1-ին մասի «է» ենթակետի և «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված տպագրական օժանդակ սարքավորումները՝ 1030.0 հազ. դրամ գնահատված արժեքով՝ համաձայն N 1 հավելվածի, և Երևան քաղաքի Կոմիտասի 49/2 հասցեում գտնվող տարածքից 83,640.0 հազ. դրամ գնահատված արժեքով 288.0 քառ. մետր տարածքը (1-ին հարկից) (այսուհետ միասին՝ գույք) հետ վերցնել և ներդնել «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում՝ այդ գույքի արժեքի չափով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավելացնելով ընկերության կանոնադրական կապիտալը՝ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով:

2. «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» և «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված «Որակի ենթակառուցվածքների բարեփոխում» ծրագրի (բաժին՝ 04, խումբ՝ 01, դաս՝ 01, ծրագիր՝ 14) շրջանակներում «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ձեռք բերված սարքավորումները և էտալոնային համակարգերը՝ 86,519.0 հազ. դրամ ձեռքբերման արժեքով՝ համաձայն N 2 հավելվածի, ներդնել «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում այդ գույքի արժեքի չափով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավելացնելով ընկերության կանոնադրական կապիտալը՝ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված գույքի արժեքի չափով «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը, կանոնադրության մեջ համապատասխան փոփոխության կատարումը և պետական գրանցումը:

4. Սահմանել, որ սույն որոշումից բխող գույքային իրավունքների, ինչպես նաև, ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխությամբ պայմանավորված, կանոնադրության փոփոխությունների հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման՝ «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. օգոստոսի 26
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2016 թվականի
օգոստոսի 25-ի N 868 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

«ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆԵՐԴՐՎՈՂ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Անվանումը	Տարեթիվը	Քանակը	Գնահատված արժեքը (հազ. դրամ)
1.	Ծալող մեքենա FKS MINIPLT 510	1996 թ.	1	120.0
2.	Ամրակալիչ Rapid 110	1997 թ.	1	50.0
3.	Դարսիչ Grafijod RA	1997 թ.	1	30.0
4.	Տպող մեքենա և «տակդիր» RISOGRAPH RA4200	1997 թ.	1	100.0
5.	Բրոշյուրավորող սարք Duplo DMB-50	1997 թ.	1	350.0
6.	Էջաշար DUPLO DC-10 mini, «տակդիր»	1997 թ.	1	300.0
7.	Ձերմասոսնձող սարք Graeibind BLC-600	1997 թ.	1	80.0
Ընդամենը			7	1030 .0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2016 թվականի
օգոստոսի 25-ի N 868 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

«ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆԵՐԴՐՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԷՏԱԼՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ

NN ը/կ	Անվանումը	Տարեթիվը	Քանակը	Ձեռքբերման արժեքը (հազ. դրամ)
1.	ԱԳԼՃԿ ստուգաչափման շարժական լաբորատորիա	2015 թ.	1	25374,0
2.	Էտալոնային ավտոկշեռք	2015 թ.	1	15960,0
3.	Ելակետային չափանոթների հավաքածու	2015 թ.	1	11755,0
4.	Ֆիզիկաքիմիական չափումների և բժշկական նշանակության ստուգաչափման և տրամաչափարկման սարքավորումներ	2014 թ.	1	24930,0
5.	Կենցաղային ջրաչափերի ստուգաչափման վահանակ	2014 թ.	1	8500,0
Ընդամենը				86519,0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ